ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ուսումնասիրելով միջազգային փորձը կապված՝ հանրային խորհուրդների ստեղծման և կառավարման հետ հայտնում եմ հետևյալը.

Ֆրանսիայի Հանրապետության Սահմանադրությունը ուղղակիորեն նախատեսում է հանրային խորհրդակցական մարմնի՝ Սոցիալական և Տնտեսական Խորհրդի ստեղծումը: Խորհրդի կազմում ընդգրկված է 231 անդամ: 163 խորհրդական նշանակվում են հասարակական և մասնագիտական կազմակերպությունների կողմից, 68 խորհրդական նշանակվում են կառավարության կողմից՝ առավել իրավասու փորձագետների շրջանից, բացի այդ 72 հոգի՝ նշանակված վարչապետի կողմից, մասնակցում են խորհրդի աշխատանքներին դիտորդի կարգավիճակով[1]:

Նախքան որևէ տնտեսական, սոցիալական կամ բնապահպանական բնույթի ծրագրի իրականացումը կամ իրավական ակտի ընդունումը, դրանց նախագծերի վերաբերյալ Ֆրանսիայի կառավարությունը պարտավոր է հարցնել խորհրդի կարծիքը: Խորհուրդը կարող է իր նախաձեռնությամբ. դիմել կառավարությանը անհրաժեշտ համարվող բարեփոխումների քննարկման նպատակով[2]:

Խորհրդի անդամները ընտրում են Բյուրո, որը հանդիսանում է Խորհրդի ղեկավար մարմին: Բյուրոյի կազմի մեջ մտնում են Խորհրդի Նախագահը և 18 անդամ:

Ռուսաստանի Դաշնությունում հանրային խորհուրդը ձևավորվում է Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների կամավոր մասնակցության, հասարակական միավորումների ներկայացուցիչների և այլ կազմակերպությունների մասնակցության

---

[1] Ֆրանսիայի տնտեսական և սոցիալական հարցերով խորհրդի մասին օրենքի վերաբերյալ 1958թ. դեկտեմբերի 29-ի N 58 որոշում
http://www.legifrance.gouv.fr/affichTexte.do?cidTexte=LEGITEXT000006069228&dateTexte=20110920

[2] https://ru.wikipedia.org/wiki/%D0%A1%D0%BE%D1%86%D0%B8%D0%B0%D0%BB%D1%8C%D0%BD%D1%8B%D0%B9_%D0%B8_%D1%8D%D0%BA%D0%BE%D0%BD%D0%BE%D0%BC%D0%B8%D1%87%D0%B5%D1%81%D0%BA%D0%B8%D0%B9_%D1%81%D0%BE%D0%B2%D0%B5%D1%82_%D0%A4%D1%80%D0%B0%D0%BD%D1%86%D0%B8%D0%B8

հիման վրա՝ կամավորության սկզբունքով: Խորհրդի անդամները կատարում են իրենց պարտականությունները հասարակական հիմունքներով:

Խորհրդի և նրա անդամների մասին կանոնակարգը սահմանվում է Արդարադատության նախարարի հրամանով: Խորհրդի կազմակերպչական նիստի ժամանակ բաց քվեարկությամբ ընտրվում է Խորհրդի նախագահ, նրա տեղակալը (տեղակալները) և քարտուղար[3]:

Գերմանիայի Դաշնային Հանրապետություն էկոնոմիկայի և էներգետիկայի նախարարությանը կից գործում է խորհրդատվական՝ խորհուրդ, որում ընդգրկված փորձագետները խորհրդատվություն են տրամադրում նախարարին տնտեսական քաղաքականության առանձնահատուկ հարցերով: Այս խորհուրդն անկախ մարմին է, որի նկատմամբ չի իրականացվում որևէ վերահսկողություն: Խորհուրդն բաղկացած է վեց ենթախորհուրդներից՝

1. Ակադեմիական խորհուրդ
2. Փոքր և միջին ձեռնարկատիրության խորհուրդ
3. Թվային տնտեսության խորհուրդ
4. Արտաքին տնտեսական հարաբերությունների խորհուրդ
5. Տուրիզմի խորհուրդ
6. Հավատարմագրային խորհուրդ:

Մոլդովայի Հանրապետությունում հասարակական միավորումների աշխատանքը դյուրացնելու նպատակով Արդարադատության նախարարությանը կից ստեղծվել է լիցենզավորման հանձնաժողով: Լիցենզավորման հանձնաժողովի գործունեության մասին կարգը սահմանվում է Արդարադատության նախարարի կողմից[4]:

Լիցենզավորման հանձնաժողովը կառավարում է հանձնաժողովի նախագահը, որը ընտրվում է հանձնաժողովի կազմից փակ քվեարկությամբ ձայների մեծամասնությամբ: Հանձնաժողովի նախագահը կարող է հետ կանչվել հանձնաժողովի անդամների 1/3 պահանջով:

Հանձնաժողովի նախագահի ժամանակավոր բացակայության կամ իր լիազորությունների կատարման անհնարինության դեպքում, վերջինս հանձնաժողովի

---

[3]Порядок формирования Совета Приказ МИНИСТЕРСТВО ЮСТИЦИИ РФ 29 января 2007 г. N 14

[4] **ПОСТАНОВЛЕНИЕ ПРАВИТЕЛЬСТВА РЕСПУБЛИКИ МОЛДОВА от 15 февраля 2000 года №129**

անդամներից նշանակում է իրեն փոխարինող, ով ժամանակավորապես կատարում է հանձնաժողովի նախագահի լիազորությունները:

Հանձնաժողովը իրականացնում է իր գործունեությունը հերթական նիստերի միջոցով, գումարելով դրանք ոչ ուշ, քան ամիսը մեկ անգամ: Անհրաժեշտության դեպքում հանձնաժողովը գումարում է արտահերթ նիստ: Հանձնաժողովի նիստերը տեղի են ունենում դռնբաց: Հանձնաժողովը որոշումներ է ընդունում նիստին մասնակից հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ: Քվեարկության ժամանակ ձայների հավասարության դեպքում որոշումը համարվում է չընդունված, իսկ հարցի քննարկումը հետաձգվում է:

Լիցենզավորման հանձնաժողովի քարտուղարը նշանակվում է Մոլդովայի Արդարադատության նախարարի հրամանով[5]:

Ամերիկայի Միացյալ Նահանգների Մասաչուսեթսի Հանրային Խորհրդի Կոմիտեն հանրային մարմին է, որը կազմված է 15 անդամից, որոնք նշանակվում են նահանգապետի, Սենատի նախագահի և Մասաչուսեթսի Գերագույն դատարանի կողմից: Կոմիտեն իրավական օգնություն է տրամադրում կարիքավոր անձանց քաղաքացիական և քրեական գործերով, ինչպես նաև վարչական գործերով իր լիազորությունների շրջանակներում: Հանրային Խորհրդի Կոմիտեն ղեկավարում է Գլխավոր խորհրդականը, որը նշանակվում է Խորհրդի կողմից: Գլխավոր խորհրդականը կատարում է իր գործառույթները Ավագ Կառավարման Թիմի աջակցությամբ[6]:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում - կիրառություն է գտնում նաև «Քաղաքացիների Ժյուրի» անվանումն ունեցող մարմինը, որը կազմած է տեղի բնակչության ներկայացուցիչներից, որպես կանոն, պատահականության սկզբունքով ընտրված անդամներից: Անդամները ընտրվում են բաց քվեարկությամբ և ընտրության գործընթացի նկատմամբ իրականացվում է արտաքին վերահսկողություն:

«Քաղաքացիների Ժյուրի» անվանումն ունեցող մարմնին համանման փորձ կիրառվում է միջազգային իրավական հարթակում՝ Ոչ առևտրային իրավունքի միջազգային կենտրոնի կողմից: Վերջինս համարվում է տեղեկատվության առաջատար իրավական աղբյուր քաղաքացիական հասարակության համար: Ոչ առևտրային իրավունքի միջազգային կենտրոնը օգնություն է ցուցաբերում ոչ առևտրային

---

[5] http://lex.justice.md/ru/338140/

[6] https://www.publiccounsel.net/hr/divisions/

կազմակերպությունների օրենսդրության կատարելագործման ուղղությամբ աշխարհի ավելի քան 80 պետություններին՝ այդ թվում Եվրասիա մայրցամաքի երկրներին:

Ոչ առևտրային իրավունքի միջազգային կենտրոնը համագործակցում է ինչպես պետությունների կառավարության, այնպես էլ ոչ առևտրային կազմակերպությունների և ոլորտի մասնագետների հետ, ովքեր շահագրգիռ են իրականացնելու բարեփոխումներ[7] Ոչ առևտրային իրավունքի միջազգային կենտրոնը կառավարում է Տնօրենների միջազգային խորհուրդը:

Եվրոպայի շատ պետություններում Ոչ առևտրային իրավունքի միջազգային կենտրոնի մասնաճյուղի գրանցման իրավունքը վերապահվում է այդ պետությունների նախարարություններին կամ վարչական մարմիններին:

[7] http://actngo.info/sites/default/files/files/recomendation_of_icnl.pdf